

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՆԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

13 սեպտեմբերի 2011թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա.Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հունիսի 29-ին Երևանում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության կառավարության եւ Ավստրիայի Նանրապետության կառավարության միջեւ մաքսային գործերում համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 24.08.2011թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի փեղակալ Ա. Ալավերդյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով Համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ավստրիայի Հանրապետության կառավարության միջեւ մաքսային գործերում համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2011 թվականի հունիսի 29-ին՝ Երեւանում:

2. Համաձայնագրի նպատակն է զարգացնել երկու երկրների միջեւ առեւտրափոխանակական հարաբերությունները, ինչպես նաեւ փեղեկավարության փոխանակման միջոցով իրականացնել առավել արդյունավետ համագործակցություն մաքսային ծառայությունների միջեւ, որն էլ պետք է հիմնված լինի հստակ իրավական դրույթների վրա:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

- Ավստրիական կողմին ցուցաբերել օգնություն մաքսային օրենսդրության պարզաճ կիրառումն ապահովելու նպատակով, մաքսային օրենսդրության իրավախախտումները կանխելու, հետաքննելու, քննելու եւ դրանց դեմ պայքարելու նպատակով, մաքսային օրենսդրության կիրառմանը վերաբերող վարչական բնույթի որոշումների եւ փաստաթղթերի առաքման ու ծանուցման հարցերում (հոդվ. 2, կեր1, ենթակետեր ա),բ),գ)),

- իր նախաձեռնությամբ ՆՆ օրենսդրությանը համապատասխան օգնել Ավստրիական կողմին, եթե դա անհրաժեշտ է մաքսային օրենսդրությունը ճիշտ կիրառելու եւ մաքսային փուրքերն ու հարկերը ճշգրիտ հաշվարկելու համար, մասնավորապես փրամադրել հետեւյալ փեղեկավարությունը՝

1) այն գործողությունների մասին, որոնք ՆՆ փարաձքում մաքսային օրենսդրության խախտում են կամ կարող են համարվել խախտում,

2) մաքսային իրավախախտումներ կատարելու մեջ կիրառվող նոր միջոցների եւ մեթոդների մասին,

3) այն ապրանքների մասին, որոնք հայտնի են որպես մաքսային օրենսդրության ծանր խախտման առարկա,

4) այն փրանսպորտային միջոցների մասին, որոնց վերաբերյալ հիմքեր կան ենթադրելու, որ դրանք օգտագործվել են, օգտագործվում են կամ կարող են օգտագործվել մաքսային օրենսդրության խախտումների ժամանակ,

5) Նայկական եւ Ավստրիական կողմերի փարաձեռքերի միջև արժույթային արժեքների միջասհմանային փոխադրումների մասին,

6) այն հնատճ իրերի եւ արվեստի գործերի մասին, որոնք ներկայացնում են գեղարվեստական արժեք Պայմանավորվող կողմերից մեկի համար եւ հայտնաբերվել են մյուս Պայմանավորվող կողմի մաքսային ծառայության կողմից (հոդվ. 3),

- ապահովել, որպեսզի ՆՏ մաքսային ծառայությունն օգնի Ավստրիական կողմի մաքսային ծառայությանն իր իրավասության ներքո գտնվող ոլորտներում, Նամաձայնագրում ամրագրված եղանակով եւ պայմաններով՝ ապահովելու համար, որ մաքսային օրենսդրությունը ճիշտ կիրառվի եւ մաքսային փուրքերն ու հարկերը ճշգրիտ հաշվարկվեն (հոդվ. 4, կետ 1),

- երաշխավորել, որ հարցման հիման վրա ՆՏ մաքսային ծառայությունը փրամադրի ցանկացած փեղեկարվություն, որը կներառի ներմուծված ապրանքների եւ արժույթային արժեքների, արտահանվող ապրանքների ու արժույթային արժեքների եւ փարանցված ապրանքների օրինական լինելու վերաբերյալ փյալներ՝ անհրաժեշտության դեպքում նշելով ապրանքների նկարագրի կիրառված մաքսային ընթացակարգը (հոդվ. 4, կետ 2),

- երաշխավորել, որ ՆՏ մաքսային ծառայությունը հարցման դեպքում ՆՏ օրենսդրության, իր իրավասության եւ հնարավորությունների սահմաններում իրականացնի հսկողական բնույթի անհրաժեշտ միջոցառումներ, որոնք մասնավորապես վերաբերում են Ավստրիական կողմի փարաձեռքում գործող մաքսային օրենսդրության խախտումներ կատարած կամ կատարելու մեջ կասկածվող կամ հայտնի անձանց, այն ապրանքներին, որոնք հայտնի են որպես ապօրինի փոխադրման եւ մաքսանենգության առարկա, այն փրանսպորտային միջոցներին եւ բեռնարկներին, որոնք օգտագործվում են կամ կասկածվում է, որ կարող են օգտագործվել Ավստրիական կողմի փարաձեռքում գործող մաքսային օրենսդրության խախտումներ կատարելու ժամանակ (հոդվ. 5),

- երաշխավորել, որ ՆՏ մաքսային ծառայությունն իր նախաձեռնությամբ կամ հարցման դեպքում, ՆՏ օրենսդրության, իր իրավասության եւ

հնարավորությունների սահմաններում Ավստրիական կողմի մաքսային ծառայությանը փրամադրի զեկույցներ, գրանցված ապացույցներ կամ փաստաթղթերի հաստատված պարճեններ, որոնք փախս են ամբողջական տեղեկավորություն այն բացահայտված կամ ծրագրված գործողությունների մասին, որոնք ՆՏ փարածքում գործող մաքսային օրենսդրության խախտում են կամ կարող են հանդիսանալ խախտում (հոդվ. 6, կետ 1),

- ապահովել, որպեսզի ՆՏ մաքսային ծառայությունը հայցող Ավստրիական կողմի մաքսային ծառայության հարցումով, ՆՏ օրենսդրությանը համապատասխան, ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցանկացած փաստաթուղթ փրամադրելու կամ հայցող ծառայության՝ կայացված եւ Նամաձայնագրի գործողության ոլորտի ներքո գրնվող ցանկացած որոշման մասին ՆՏ փարածքում գրնվող կամ հիմնադրված հասցեատիրոջը ծանուցելու համար (հոդվ. 7, կետ 1),

- հնարավորության սահմաններում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ թույլատրելու համար վերահսկելի մատակարարման համապատասխան կիրառումը՝ քրեական քննություն իրականացնելու նպատակով (հոդվ. 8, կետ 1),

- որպես հայցվող կողմ՝ ապահովել, որպեսզի ՆՏ մաքսային ծառայությունը ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ հարցումը կատարելու համար, եւ անհրաժեշտության դեպքում նախաձեռնի պաշտոնական կամ դատական միջոցներ, որոնք անհրաժեշտ են հարցումը կատարելու համար (հոդվ. 9, կետ 1),

- ապահովել, որպեսզի ՆՏ մաքսային ծառայությունը Ավստրիական կողմի մաքսային ծառայության հարցումով կատարի ցանկացած անհրաժեշտ հետաքննություն՝ ներառյալ մաքսային իրավախախտում կատարելու մեջ կասկածվող փորձագետների, վկաների կամ անձանց հարցաքննությունը, եւ նախաձեռնի ստուգումներ, գնումներ եւ փաստահավաք քննություն՝ կապված Նամաձայնագում նշված հարցերի հետ (հոդվ. 9, կետ 2),

- ապահովել Նամաձայնագրի համաձայն ցանկացած ձեռով փոխանցված տեղեկավորության գաղտնիությունը՝ պահելով այն որպես ծառայողական գաղտնիք եւ պաշտպանել այնպես, ինչպես կպաշտպանվեր նմանատիպ տեղեկավորությունը ՆՏ գործող օրենսդրության համաձայն (հոդվ. 11, կետ 1),

- երաշխավորել, որ ՆՏ մաքսային ծառայությունը չպահանջի Նամաձայնագրի կատարման ընթացքում առաջացած ծախսերի հատուցում՝ բացառությամբ պետական ծառայող չհանդիսացող փորձագետներին, վկաներին, բանավոր եւ գրավոր թարգմանիչներին վերաբերող ծախսերի (հոդվ. 14, կետ 1):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի հունիսի 29-ին Երեւանում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության կառավարության եւ Ավստրիայի Նանրապետության կառավարության միջեւ մաքսային գործերում համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13 սեպտեմբերի 2011 թվականի
ՍԴՈ-989